

Լեզվաբանություն և բանասիրություն

Լալիկ Խաչատրյան

*Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլ. հասցե՝lingualal51@mail.ru*

Սիրարբի Դավթյան

*Եվրասիա միջազգային համալսարանի ուսումնական հարցերի գրասենյակի
ղեկավար,
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի
Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝sirarpi.davtyan@eu.am*

DOI: 10.53614/18294952-2022.1-87

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սույն հոդվածի նպատակը ընդհանուր հայկական ամսա-
նունների ծագումնաբանության քննությունն է, դրանց անվա-
նակոչության ժամանակաշրջանի բացահայտումը, որով զբաղ-
վել են նաև մի շարք անվանի հայագետներ:

Ցույց է տրվում, որ *հին հայկական* ամսանուններից հինգը
բնիկ հայկական բառեր են՝ **տրէ, քաղոց, արաց, արեգ,
ավելյաց**, յոթը իրանական փոխառություններ են՝ **մեհեկան,
ահեկան, մարերի, հրոտից, նավասարդ, սահմի, մարգաց**。
դրանցից չորսը պարսկական ամսանուններ են, երեքը համա-
գործաձական բառեր են, որոնք հայկական մշակույթում վե-
րածվել են ամսանունների՝ **նավասարդ, սահմի, մարգաց**,
ընդ որում՝ **հոռի** ամսանունը մնում է չստուգաբանված:

Առաջին անգամ համեմատություն է կատարվում հին հա-
յերենի, միջին հայերենի և արդի հայերենի ամսանունների
միջև: *Միջինհայերենյան գոյավիճակում* ամսանունները հիմ-

նականում վերցված են եղել *Հուլյան տոմարից*, որոնք հետագայում անցել են աշխարհաբարին, որոնց մի մասն էլ աշխարհաբարյան ամսանուններից տարբերվում է գրությամբ և արտասանությամբ, մի մասն էլ փոխառություններ է արաբերենից և թուրքերենից:

Արդի հայերենում գործածական են լատինական (հռոմեական) ամսանունները, քանի որ հայերնը լիովին անցել են Հուլյան տոմարին 18-րդ դարից՝ ամբողջությամբ վերցնելով լատինական ամսանունները:

Հոդվածում ներկայացվում է նաև որոշ տոմարագետների կազմած հայոց տոմարի ամիսների ամսանուտների գուգակցությունը Հուլյան տոմարի հետ, ինչպես նաև տրվում են հայոց ամիսների պարունակած օրերը, որի միջոցով պարզ է դառնում, որ տարբեր դարերում դրանք իրենց ժամանակային ընդգրկմամբ տարբեր են եղել:

Հիմնաբառեր. ամսանուն, տոմար, փոխառություն, ստուգաբանություն, տարի:

Ներածություն

Հայերենի բառային կազմում որոշակի շերտ են դիտվում ժամանականիշ բառերը՝ օրվա հատույթների անվանումները, ամսանունները, շաբաթվա անվանումներն ու տարվա եղանակների անունները: Ժամանականիշ բառերի համատեքստում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ընդհանուր հայկական ամսանունները, որոնց իմաստակառուցվածքային և ծագումնաբանական հետազոտությամբ զբաղվել են ոչ միայն հայրենական, այլև արտերկրի հայագետները:

Սույն հոդվածում մենք դիտարկելու ենք ընդհանուր հայկական ամսանունների բովանդակության և արտահայտության պլանները, ինչպես նաև նրանց ծագումնաբանության հարցերը՝ պարզելու դրանց բնիկ և փոխառյալ շերտերը, ամբողջացնելով ամսանունների իմաստակառուցվածքային քննության շրջանակները: Ընդհանուր հայկական ամսանունները ներկայացնելու ենք ըստ լեզվի զարգացման փուլերի՝ տարբերակելով *հին հայկական, միջին հայերենյան և արդի հայերենյան ամսանուններ* տեսակները:

Հին հայկական ամսանունները բառակազմորեն բաժանվում են երկու խմբի՝ *սեռական հոլովածևով* կառույցներ և բառակազմական հիմք+*ական ածանցով* կազմություններ (Աղայան, 1986, էջ 58): Այս խմբից դուրս են **Նավասարդ** և **Արեգ** ամսանունները:

Ամսանուններից երեքը՝ *Հոռի, Սահմի, Տրէ*, սերում են եզակի սեռական հոլովածևից, իսկ չորսը՝ Քաղոց, Արաց, Մարգաց, Հրոտից՝ հոգնակի սեռականից:

Հայագիտության մեջ հին հայկական ամսանունների անվանակոչության ժամանակը համարվում է մ.թ.ա 641 թվականի մայիսից մինչև 637 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածը (Աղայան, 1986, էջ 73) :

Մեթոդ

Հետազոտությունն իրականացվել է հայ և արտասահմանյան հեղինակների հետազոտությունների արդյունքների և դրանց համադրությունների հիման վրա: Ուսումնասիրությունը կատարվել է երկու ուղղությամբ. նախ քննվել է հին ամսանունների ծագումնաբանությունը, ապա համադրվել են հայերենի զարգացման բոլոր փուլերի ամսանունները՝ ցույց տալու ներկայիս ամսանունների առաջացման աղբյուրները:

Արդյունքներ և քննարկում

Այժմ անդրադառնանք յուրաքանչյուր ամսանվան ծագումնաբանությանն առանձին-առանձին:

1. **Նավասարդ** ամսանվանն անդրադարձել ենք առանձին հոդվածով (Դավթյան, 2017, էջեր 107-115):

2. **Հոռի** - նշանակում է երկրորդ ամիս: Կարծիք կա, որ այս անունն առաջացել է վրացերեն «**որի**» բառից, նշանակում է **երկու**, որն անհավանական է: Վանական Վարապետը այն կապում է նաև «հոր» բառի հետ, որը համապատասխանում է «հավաքած բերքը հորերում ամբարելու» ժամանակին (Բաղալյան, 1976, էջ 96):

Քանի որ *հոռին* աշնան ամիս է, ավելի հավանական է վերջինը: Այն նաև Հայկի դուստրերից մեկի անունն է:

Ղևոնդ Ալիշանն ավելի հավանական է համարում այն կապել Հայկի *Խոռ* որդու անվան հետ (Ալիշան, 2002, էջ 76):

Հովհ. Երզնկացին գրում է. «Այր ոմն զՄատրան ամիս է Հոռի փոխարկեաց, որդւոյն իւրոյ Խոռէն կոչելով, յաղագս ընչաւետութեանն իւրոյ՝ աղերսեաց զամենեսեան, յետ մեռանելոյ որդւոյն իւրոյ՝ յիշատակելով զանունն նորա ի ձեռն ամսեանն, որպէս Յուլիսնն և Օգոստոս ի ձեռն անուանցն՝ և թագաւորքն յիշատակին»: Եվ այս պատճառով է, որ Զատիկի երրորդ կիրակի տոնը, որ դրված է *հոռի* ամսվա սկզբում, կոչվեց Աշխարհամատրան (Ալիշան, 2002, էջ 76): Սա նշանակում է, որ Հոռի ամիսը հայտնի է եղել նաև **Մատրան** անունով:

3. **Սահմի** - նշանակում է «երրորդ ամիս»: Սա էլ որոշ հեղինակներ բխեցնում են վրացերեն «**Սամի**» երեք բառից: Վանականը կապում է **սահմանել** բայի հետ՝ նկատի ունենալով աշխատանքները սահմանելու պարագան: Այսինքն՝ որոշակի աշխատանքներ պիտի այդ ամսին սկսեին, հակառակ դեպքում ուշ կլիներ: Հավանաբար ձմռանը պատրաստվելու գործերն են կատարել՝ հաց թխել, տուն կառուցել: Մինչև այսօր էլ աշնանը կատարվում են այդ աշխատանքները, ձմեռվա հացը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին են թխում:

Այս տեսակետին են հակված Հ. Բաղալյանը, Հր. Աճառյանը, Հ. Ե. Տայեցին, Բասմաջյանը և ուրիշներ: Իսկ այս տեսակետին չի համաձայնում Ստ. Մալխասյանը՝ նշելով. քանի որ հայկական մյուս ամիսների նշանակությունները կապված են եղանակների և այդ եղանակներում տեղի ունեցող կենցաղային երևույթների հետ, հավանական է, որ Հոռի ամիսը նշանակելիս է

եղել *Ոռի ամիս*, այսինքն՝ որթատունկի՝ այգեստանի ամիս... իսկ *սահմի ամիս՝ սերմանց ամիս*: (Մալխասյանց, հ.4, էջ 176,): Սակայն Էդ.Աղայանը չի ընդունում այս փաստարկը և նկատում է, որ **սահմի** ամսանունը **սահմ** «ահ, երկյուղ» բառի սեռական հոլովն է (ունենք սահմնկել, վախենալ), **հոռ**-ին՝ **հոռ** բառի: Բայց տարօրինակ է թվում, թե ինչպես այդ իմաստով բառը կարող է դառնալ ամսանուն: Միաժամանակ նա նշում է, որ դա սոսկ վարկած է:

Ըստ Էդ.Աղայանի՝ հայերը ծանոթ են եղել Մարսի արբանյակներին, որոնց հունական անուններն են Ֆոբոս (ահ) և Դեյմոս (երկյուղ, սարսափ): Սա նկատի ունենալով՝ նա կարծում է, որ Սահմ և Հոռ այդ արբանյակներին հայերի տրված անուններն են, որոնց սեռական հոլովաձևերն են *սահմի* և *հոռի*, որոնք դարձել են ամսանուններ: **Սահմ** բառն իրանական փոխառություն է:

Երրորդ ամիսը ևս Հայկի դուստրերից մեկի անունն է, որը նմանվում է եբրայական Նոյեմբին (Ղ. Ալիշան, 2002, էջ 76):

Հոռի և Սահմի անունները ոմանք (Տայեցի, Բասմաջյան) համարում են կովկասյան փոխառություն: Այս տեսակետն ընդունում է նաև Հր. Աճառյանը:

Հոռի ամսանունը առաված է իբր «երկրորդ ամիս», ինչպես *սահմի*՝ «երրորդ ամիս» կովկասյան *երեք* բառից (Արմատական, հ. 3, էջ 114– 115): *Սահմի* բառի տակ գրում է. «Փոխառյալ է կովկասյաններից կամ խաղերենից... մեր բառը սեռականի ձևով է, ինչպես և մյուս ամսանունները» (Արմատական, հ. 4, էջ 163): Ստ. Մալխասյանը չի ընդունում այս ստուգաբանությունը և բերում է հետևյալ փաստարկները.

ա) վրացերենի *ori* «երկու» և *sami* «երեք» բառերը հայերենում պիտի դառնային որի, սամի, մինչդեռ ունենք *հոռի*, *սահմի*, խախտված են հնչյունական օրենքները,

բ) հայկական ամսանունները սեռական հոլովի ձև ունեն, ուստի և այդ անունների ուղղականն է **հոռ**, **սահմ**,

գ) վրացերենում *ori*, *sami* քանակական թվականներ են և «երեքը չեն գործածվել իբրև ամիս նշանակող բառեր: Հայերը «երկու», «երեք» նշանակելու համար կարիք չեն ունեցել փոխառության դիմելու, քանի որ այդ բառերը իրենց լեզվում գոյություն ունեին: (Ստ. Մալխասյանց, հ. 4, էջ 176):

Նա նաև *հոռին* կապում է ուռ-ի հետ, *սահմին՝ սերմ*, *սաղմ*, *լոռիմ* բառերի հետ: Աղայանը ընդունելի չի համարում այս տարբերակը՝ հիմնավորելով.

ա) սերմն և սաղմ (արտասանվել է *salim*) չեն կարող ունենալ *սահմ* տարբերակը,

բ) այդ երկու բառերն իրար հետ կապ չունեն. առաջինը ծագում է հնդեվրոպական *k' er* արմատից, երկրորդը վստահելի ստուգաբանություն չունի,

գ) **տոռիմ** բառը (իրանական փոխառություն) չէր կարող դառնալ **սահմ**. ճիշտ է, որ իրանական լեզուները տարբերակներ շատ ունեն, բայց դրանցից ոչ մեկում էլ նախահունչ *t*-ի փոխարեն *s* չկա,

դ) ամենակարևորն է այն, որ բնիկ հայերեն բառերում բառի միջում կամ վերջում *hm* հնչյունակապակցություն չկա: Դա սովորական է իրանական փոխառություններում, ուստի պետք է ենթադրել, որ *Սահմ* (սեռ. սահմի) ամ-

ասնունը իրանական փոխառություն է (Էդ. Աղայան, 1986, էջ 60):

4. **Տրէ** – Տիր աստծո անունից է: Ունի նաև **տրեայ** ձևը, որը Հր. Աճառյանը համարում է սեռական հոլովածև, որը, սակայն, ձիշտ չէ. է վերջավորությունը կարծվել է ածանց և փոխարինվել է **եայ** ածանցով:

Հր. Աճառյանը այն համարում է իրանական նոր շրջանի փոխառություն, իսկ Էդ. Աղայանը՝ բնիկ հայկական՝ նկատի ունենալով, որ այն ծագել է հնդեվրոպական *dei-*արմատի *diur-*, *dir-*ձևերից: Ինչպես ուրիշ լեզուների, հնդեվրոպական նույն արմատից ծագած բառերը, այնպես էլ հայերենի Տիր/Տիր-ը նախապես նշանակել է ընդհանրապես «Աստված», բայց հետագայում ավելի «մեծ աստվածների», հատկապես Հայկի, ապա և՛ Արամազդի պաշտամունքի հետևանքով, դարձել է գիտության և ճարտարության աստված (տիր-ե-յ- տրէ): Նշում է նաև, որ այն գալիս է **տիրէ** ձևից:

Հր.Աճառյանը նշում է, որ Է-ն իրանական մի գավառականի ուղղականի վերջավորություն է (Աղայան, 1974, էջ 150):

Բայց սա քիչ հավանական է, քանի որ հայոց հին ամսանունները կազմված են սեռական հոլովով, ուստի հակված ենք սա ևս սեռականով համարել. իրանականի հետ նմանությունը Էդ.Աղայանը համարում է պատահականություն:

Տիր/Տիր աստվածանունը համարելով բնիկ հայկական բառ՝ մենք հնարավորություն ենք ունենում Տրէ ամսանունը դիտելու որպես հնագույն **ե** հոլովման սեռականի ձևը / տիր-ե-յ - տրէ/: Որ հնագույն հայերենն ունեցել է *ե* հոլովում, դա հայտնի է: Նշվում է նաև, որ այն գալիս է **տիրէ** ձևից:

Հ.Հյուբշմանը նշել է, որ «Ավելի շուտ Տրէ ամսանունը կարող էր կապված լինել Տիր աստծու անվան հետ» (H. Hübschman, 1897, էջ 89):

Ստ. Մալխասյանցը այն համարում է պահլավերեն բառ, որը նշանակում է «Շնիկ աստղ», իսկ պարսկերենում արեգակնային չորրորդ ամիսն է:

Հ. Բադայանը նշում է, որ Տրէն պարսկական չորրորդ ամսի անունն է, որն առաջացել է պարսից Tir աստծու անունից (Հ. Բադայան, 1976, էջ 52):

Ըստ Գոթոյի և Բելլիի ստուգաբանության՝ այն ևս իրանական փոխառություն է (Աղայան, 1974, էջ 149):

Այսպես, ուրեմն, Տրէ ամսանունը հայկական Տիր/ Տիր աստծո անվան սեռական հոլովն է, որը ևս Հայկի որդիներից մեկի անունն է (Ալիշան, 2002, էջ 77):

5. **Քաղոց** – Հր. Աճառյանը ստուգաբանել է որպես «արու այծերին էգերի հոտերին խառնելու ամիս»: Ունի հայկական ծագում: Ֆրանսիացի բանասեր Ե. Դյուլորիեն *քաղոցը* կապում է «քաղել» բայի հետ: Այս տեսակետին է հակված նաև Ք. Պատկանյանը: Ստ.Մալխասյանցը այն ստուգաբանում է որպես «անասունների զուգավորության ամիս»: Նա սխալ է համարում *քաղոցը* որպես *քաղելու ամիս* ընդունելը, որովհետև *քաղել* բայը «հնձելու» նշանակություն չունի և ոչ էլ *քաղը՝ հոսնձի* (Մալխասյանց, հ. 4, էջ 539): Ավելի հավանական է վերջինը: Ումանց կարծիքով **քաղ** նշանակում է «արու այծ», մի ամսի կարծիքով էլ՝ **այգուց քաղ անել**:

Հ. Բադայանը նշում է, որ Քաղոցը հայկական ծագում ունի, առաջացել

է *քաղել* բառից, որը հիշեցնում է հունձը, ենթադրվում է, որ հնում հունձն սկսվում էր այդ ամսին, իսկ ներկայումս, օրացույցի փոփոխությունների շնորհիվ, չի համապատասխանում տարվա նույն ժամանակին (Բաղայան, 1976, էջ 52): Այն Հայկ նահապետի որդիներից մեկի անունից է:

6. **Արաց** – Արաց-ը ևս ստուգաբանվում է որպես «արու այծերին էգերին խառնելու ամիս»: Այս բառը **այր** բառի հոգնակի սեռական – տրականի ձևն է՝ **այր- արաց – արանց**: Հ. Բաղայանը այս բառը համարում է չստուգաբանված և բերում է Վանականի ստուգաբանությունը. «Եւ արանց ի յունել ձեան զլերինս և զբլուրս, ասեն՝ արանց է այս ճանապարհ և ոչ կանանց, արի մարդոց է արս և ոչ թուլից և վատաց» (Աբրահամյան, 1956, էջ 206):

Գր. Տաթևացին ևս գրում է. «Ի յունել ձեան զլերինս և զբլուրս, ասեն, արանց է այս ճանապարհ և ոչ կանանց... արի մարդոց է աուրքս և ոչ թուլից և վատաց» (Արմատական, հ.1 , էջ 298): Երկուսն էլ կապում են **այր** «տղամարդ» բառի հետ: Պոլ դը Լագարդը **արացը** համարում է հոգնակի սեռականի ձև, որի մեջ վերջավորությունն է –**աց**, հիմքը՝ **ար** (Lagarde, 1866, էջ 163):

Արաց ձևը հոգնակի սեռական համարելով՝ կունենանք ուղղականի **արք** ձևը, որը, ինչպես գիտենք, այր «տղամարդ» բառի հոգնակին է: Էդ. Աղայանը **այր** բառի մեջ չի տեսնում *տղամարդ* իմաստը, այլ ստուգաբանում է իբրև «արունների ամիս», այսինքն՝ «արու անասունները (մասնավորապես արու ոչխարները, խոյերը) էգերին խառնելու ամիս»: Ըստ այս մեկնության՝ հայերը այծերի և ոչխարների խառնքի համար ունեցել են երկու ամիս՝ **քաղոց և արաց**: Եթե արացը համարում ենք *արք* ուղղականի սեռական հոլովածնը, նկատում ենք, որ գրաբարում այդ ձևը գոյություն չունի. գրաբարում այն պիտի լինի **արանց**: Ինչպես գիտենք, ր-ով վերջացող բառերի մի մասը հնում ունեցել է հոգնակի սեռականի –ց-ով ձևը, որ հետագայում փոխարինվել է –աց կամ – ոց ձևով: 5-րդ դարի մատենագրության մեջ շատ բառեր ավանդված են հին և նոր ձևերով: Օր. դուստր- հոգն. սեռ.- տր.- դստերց, դստերաց, տէր- տերանց, տեարց: Հավանական է, որ **արք** հոգնակի ուղղականի սեռ.- տր.ն էլ լինի **արց**, թեպետ այս ձևը չկա գրականության մեջ, սակայն մեր բերած օրինակներից **տեարցը** ցույց է տալիս, որ **այրը** նախապես ունեցել է **արց** ձևը: Դրանից էլ հետագայում ունեցել ենք **արացը**, ապա՝ **արանցը**, ինչպես *կանաց* ձևն է դարձել *կանանց*. *արց* > *արաց* > *արանց*: Հարց է առաջանում, թե դա Արաց ամսանվան վրա չի տարածվել: **Արացը** ամսանուն է, իսկ հայկական ամսանունները հատուկ անուններ են, թեև մեծատառով չեն գրվում: Դա է պատճառը, որ **արացը արանց** չի եղել, թեև միջնադարյան գրականության մեջ հանդիպում ենք **արանց**-ով օրինակներ: Վերևում՝ Գր. Տաթևացու և Վանականի օրինակներում:

Ունանք այն համարում են կապադոկիական *aroa* (արոա), իսկ ունանք՝ պարսկ. *ardi* (*behecht*) ամսի անունից վերցրած Հ. Բաղայան, 1976, էջ 52): Սա ևս Հայկի որդին է (Ալիշան, 2002, էջ 77):

Բ. Թումանյանը գրում է, որ այս բառը հավանաբար «այր» ամսվա հայերենացումն է (Թումանյան, 1972, էջ 41): Կարելի է ենթադրել, որ նա հիմն-

վում է Արմատական բառարանում Խաչկոնցի ստուգաբանության վրա, ըստ որի՝ **արացը** կապվում է ասուր. **այր, էյրա**, լիգիերեն **արար, այար**, պալմիրական **այար**, ասորերեն **իյոր** ամսանունների հետ (Արմատական, հ.1, էջ 298)

Վանական Վարդապետը այն կապում է «արանց» գոյականի հետ, որը նշանակում է «տղամարդկանց»: Նա մի ավանդություն է օրինակ բերում, ըստ որի՝ ձմռան ամիսներին մեր երկրի լեռնային ձյունոտ ճանապարհներն այնքան վտանգավոր են եղել, այնպիսի բուք է եղել, որ ասում են **արանց**, այսինքն՝ տղամարդկանց ճանապարհ է, ոչ թե թույլերի: Այստեղից էլ այս ամսվա անունը դրել են Արաց (Համբարձումյան, 1992, էջ 42):

Ավելի հավանական ենք համարում Արացի՝ գրաբարյան **այր**՝ «տղամարդ», բառի հոգնակի սեռականից առաջացած լինելը՝ ուղղական- **արք**, սեռական- **արաց**:

7. **Մեհեկան** – ծագում է հին պարսկական maivrya-Մեիր-Միիր-ական-մեհեկան նախածնից, որի մեջ երկրորդ վանկի **ա** ձայնավորը դարձել է **ե**՝ նախորդի առնմանությամբ: Մեիրի>մեիր-ակ>մեհեակ, որի սեռական հոլովում (մեհեկի) շեշտազուրկ **եա** երկբարբառը դարձել է **ե**, **-ակ**-ը ածանց է: Գործածվել է նաև Մեհեկի ձևով: Մեհեկի, այսինքն՝ ածի (Խաչիկյան, 1941, էջ 160):

Կարծիքներ կան նաև, որ այն առաջացել է իրանական *Միիր* աստծու անունից:

Լ. Հովհաննիսյանը **մեհեկանը** համարում է իրանական փոխառություն (Հովհաննիսյան, 2006, էջ 60):

Իրանական հին շրջանի փոխառություն լինելու մասին է խոսում նաև Հր. Աճառյանը. նա տալիս է հետևյալ տարբերակները՝ **մեհեկան- պրսկ. mihr-gan- պիլ. mihrakan, հպ.-mithrākana**:

Հյուբշմանն այն համարում է հին պահլավերեն փոխառություն՝ mihrakan նույնանիշ բառի ձևափոխությունը: Հին պարսիկների օրացույցում էլ 7-րդ ամիսը կոչվել է mithrakana, իսկ վրացական օրացույցի 7-րդ ամիսը՝ *միհրականի*, փոխառվել է հին պահլավական mihrakan-ից: Հայերենի մեհեկան ամսանունը միջնադարում գրվել է նաև **մեհեկի, մահեկի**, որոնք ենթադրում են *միհեակ, մահեակ* ուղղականի ձևը. երկրորդ ձևը հանդիպում է միայն Վանականի մոտ, որ երևի գրչագրական սխալ է: «Մեհեկի, գի տունկք և բոյսք որպէս զմեռեալ լինին...» (Խաչիկյան, 1941, էջ 360), այսինքն՝ կապում է *մահ* բառի հետ, իբր թե՝ «մահ եկի»: Վանականը բացատրում է, որ այդ ամսին բուսական աշխարհը մեռյալ վիճակում է լինում, և կապում է *մահ* բառի հետ: Նա գրում է, որ այդ ամսին բույսերն ու տնկիները ձյունածածկ և եղյամապատ են, նման են մահացածի, դրանց աճը դադարում է, մեռյալ վիճակի մեջ են:

Ըստ Ալիշանի՝ այս ամսանունը ծագում է *մահիկ* բառից, որը նշանակում է «նորալուսին»: Նա նշում է, որ լուսնի պաշտամունքը հեթանոսական Հայաստանի տարածված պաշտամունքներից է եղել, և կարծում է, որ *մեհեկան* ամսանունը *մահիկ* բառից կարող է ծագած լինել, մանավանդ որ այս ամսին հաջորդում է Արեգ ամիսը: Սա Հայկի Մեհեկ, Մեհեկի կամ Մեհեկան դասեր

անունն է (Ալիշան, 2002, էջ 77):

8. **Արեգ** – բնիկ հայերեն բառ է, որ ծագում է հնդեվրոպական **rew**-ից: *Արեգակ* բառի արմատն է: Հնդեվրոպական **w** ձայնորդ- բաղաձայնը հայերենում դառնում է *վ(ւ)* կամ *գ*: Գրաբարում արեգը «արեգակ» մոլորակը և «արև» բառային իմաստով գործածվում է միայն բառակապակցությունների մեջ՝ Արեգ քաղաք – «Արևի քաղաք», ի յարեգ կուսէ- «արևելյան կողմից» (Արմատական, հ. 1, էջ 310): Արեգը որպես ամսանուն էր գործածվում և սովորական իմաստով գործածությունից դուրս մղվեց՝ փոխարինվելով *արեգակն* բաղադրյալ բառով:

Բենվենիստը կարծում է, որ *արեգ* ամսանունն ունեցել է **արեգի** սեռականը, որի վերջավորությունն ընկել է (Benvenist, 1965, էջ 6-11): Սա հավանական է, քանի որ հնդեվրոպական *v*-ն դառնում է *g* մեծ մասամբ *ի* ձայնավորից առաջ:

Ըստ Վանականի՝ այդ ամսին արթնանում է բնությունը:

Հնում հայոց անշարժ տոմարի ամսորը եղել է **արեգ** ամսում, որը համապատասխանել է գարնանային օրահավասարին:

Համարվում է, որ արեգակը իր նոր շրջանը սկսում է այդ ամսի մեջ՝ գարնանամուտին: Երբ հայերն իրենց Նոր տարին սկսում էին բնության զարթոնքին՝ գարնան առաջին ամսին, *արեգը* եղել է հայոց տոմարի առաջին ամիսը:

Արեգ է կոչվել նաև յուրաքանչյուր ամսվա առաջին օրը:

Այս ամիսը **Հայկի** ութերորդ դուստրերից մեկի՝ Արեգ աստվածուհու անունն է:

9. **Ահեկան** – իրանական նոր շրջանի փոխառություն է՝ պահլավերեն **ahrakan** ձևից: Պահլավական փոխառություններում **hr** հնչյունակապակցությունը դառնում է **h**: Պահլավերենում **ahrākan**-ը կազմված է **ātur** (> հայերեն՝ ատր) «կրակ, հուր» բառից: 9-րդ ամիսը նվիրված էր կրակի պաշտամունքին: Հայերենում ևս այն իններորդ ամիսն է:

Այս ամսվա անունը, ըստ Ք. Պատկանյանի, ևս կապված է «կրակային, հրային» նշանակություն ունեցող բառերի հետ:

Լ. Հովհաննիսյանը նույնպես նշում է, որ **ահեկանը** իրանական փոխառություն է (Հովհաննիսյան, 2006, էջ 55):

Ալիշանը նշում է, որ ըստ որոշ տոմարագիրների՝ **ահեկանը հարվանց** է եղել, որը նշանակում էր «երկրագործական մի բան», ինչպես խոտ հարելը (Ալիշան, 2002, էջ 77): Դա նշում է նաև Անանիա Շիրակացին. «Նաուասարդի, Հոռի, Սահմի և Մեհեկի, Արեգ և Մարերի, դստերք էին Հայկին: Տրէ, Քաղոց, Արաց և Հրոտից որդիք էին Հայկին: Իսկ Մարգաց և հարաւանց, զոր այժմ ահկի կոչեն, այս ի գործոց անուանեցան, զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին տքա» (Շիրակացի, 1940, էջ 77):

Ղևոնդ Ալիշանը նշում է, որ միջնադարի որոշ մտածողներ այն անվանում են նաև **Հարուանց**, որը նշանակում է «խոտ հարել, քաղել, հնձել»:

Հր. Աճառյանը *ահեկանի* համար տալիս է պիլ. **ahrakan** ձևը: Այստեղ ևս մեկ անգամ հիշենք, որ Աճառյանը նշում էր, որ յուրաքանչյուր պարսկական

բառ հայերենի հետ համեմատելու համար պետք է վերցնել նախ նրա պահլավերեն ձևը և միայն այն համեմատել հայերենի հետ, եթե այդ բառը հին շրջանի փոխառություն է:

Ահեկան բառը կապվում է նաև **կրակ**, **հուր** բառերի հետ:

Գր. Տաթևացու կարծիքով, Ահեկանը Հայկ նահապետի երեք դուստրերից մեկի անունն է, իսկ Ալիշանի կարծիքով՝ ո՛չ որդիների, ո՛չ էլ դուստրերի կարգից է: Բառի նշանակությունը և ամսակարգի մեջ մտնելն անհայտ են:

10. **Մարերի** – պահլավական *mađyarya* բառի փոխառություն է՝ «տարվա 10-րդ ամիսը» նշանակությամբ: Հայերենի ձևը միանգամայն օրինաչափորեն ծագում է պահլավերենից, ըստ որում պահլավական *δ*-ն հայերենում դառնում է **բ**:

Հր. Աճառյանը տալիս է հետևյալ բացատրությունն ըստ Բարթոլոմեի. պահլավական *mađyarya*, հին ձևն է 1. «զնդ. *maidyarya*» տարվա 5-րդ եղանակի աստվածության անունը, 2. այդ եղանակի վերջում հնգօրյա տոն»: Մարերին ուներ 80 օր և ձմեռային արևադարձի տոնն էր. վերջին 80-րդ օրը ընկնում էր 10-րդ ամսի 20-րդ օրը և ամառային արևադարձի տոնի 185-րդ օրն էր: (Արմատական, հ. 3, էջ 281): Նշանակում է, որ իրանական տարվա եղանակի անվանումը հայերը դարձրել են իրենց 10-րդ ամսվա անունը:

Վրացիները ևս այս բառը փոխառել են *mariali* ձևով, որ դարձել է 10-րդ ամսվա անունը:

Համապատասխանում է պահլավական «Ագարականին» և նշանակում է «**տարեմեջ**»: Ըստ Վանականի՝ այս բառի անունը առնչվում է անտառների տերևակալման հասկացության հետ:

Ըստ Հր. Աճառյանի և Լ. Հովհաննիսյանի՝ այն իրանական փոխառություն է (Հովհաննիսյան, 2006, էջ 60), իսկ ըստ Հ. Բաղայանի՝ հայերեն **մայրի** ծառի անունից է (Բաղայան, 1976, էջ 96): Մայրի ծառի հետ կապը հավաստում է նաև Վանականը՝ նշելով, որ հենց այս ամսին էր *մայրի* ծառը տերևակալում: Մենք ևս հակված ենք այս կարծիքին: Այն Հայկի դուստրերից մեկի անունից է:

11. **Մարգաց** – հին իրանական «*margazana*» ամսանվան փոխառությունն է: **Մարգ** «մարգագետին» բառի սեռական հոլովն է: Ըստ Մալխասյանի՝ նշանակում է «թռչունների թխսի ամիս»: Այս իմաստն է նշված նաև Արմատական բառարանում: Ա. Ֆրեյմանը, Լ. Հովհաննիսյանը այս ամսանունը պարսկերեն չեն համարում, այլ նկատում են, որ այն բաբելերենից է անցել պարսկերենին և հնչյունափոխվել է:

Էդ. Աղայանն այս ստուգաբանությունը չի ընդունում՝ նշելով, որ հայերեն **մարգացը** հոգնակի սեռական հոլովն է, ուղղականը կլինի **մարգ**: Այս ձևով ունենք երկու բառ. երկուսն էլ իրանական փոխառություն. **մարգ** «խտավետ տեղ» <պահլավերեն *marg* մարգագետին» բառից և **մարգ** «թռչուն» <պահլավերեն *marg* (*mury*, *murv*) ձևից: Երկրորդ բացատրությամբ այն կիրառվում է միայն **սիրամարգ** և **լորամարգ** բառերում, և օրինակ *սիրամարգը* իբրև պատրաստի թռչնանուն է փոխառվել, հայկական կազմություն չէ, ուստի և հիմք չի կարող տալ, թե *մարգ* թռչուն բառը ինչ-որ ժամանակ գործածական

է եղել հայերենում:

Լորամարգը, ըստ Աճառյանի, պիտի կազմված լինի *լոր* թռչնանունից և *մարգ* «թռչուն» բառերից, սակայն լորամարգը նույն լորն է, հետևաբար ձիշտ կլինի հայերենում այն ընդունել լոր+մարգ «մարգագետին, դաշտ» տարբերակով: Եվ քանի որ բացառվում է *մարգ* «թռչուն» բառի ինքնուրույն գործածությունը հայերենում, ապա **մարգաց** ամսանունը պետք է կապել ոչ թե դրա հետ, այլ համարել հայերենում գործածված ու գործածվող **մարգ** «մարգագետին» բառի սեռական հոլովը (այս **մարգ** բառը ենթարկվում է *ի-ս* հոլովման)

Ք. Պատկանյանն այն կապում է «մարգ» բառի, այսինքն՝ խոտհարքի ու խոտհունձի հետ: Վերջին բացատրությունը տվել են նաև Վանականը և Շիրակացին:

Տասնմեկերորդ ամիսը **մարգաց** է կոչվում ամսվա ընթացքում մարգերի ու դաշտերի՝ ծաղիկներով և խոտերով զարդարելու կամ դրանք հնձելու և երկրագործական այլ աշխատանքների պատճառով (Ալիշան, 2002, էջ 77):

11-րդ ամիսը ունեցել է **աբ** ասորական փոխառյալ ձևը, որը չի գործածվել (Աճառյան, 2013, էջ 387):

Քաղոց և Մարգաց ամիսների վերաբերյալ ֆրանսիացի բանասեր E. Du-laurier-ն իր «La chronologie Armenienne» («Ժամանակագրություն հայոց») աշխատության մեջ գրում է. «*Մարգաց* բառը կարող է լինել *մարգ* բառի հոգնակի սեռականը, *Քաղոցը՝ քաղ* բառի և ծառայած լինել մեկը՝ զարույնը հիշեցնելու համար, իսկ մյուսը՝ հունձը, այն հին ժամանակներում, երբ հայերը, բացի դաշտային կյանքի սովորեցրածից, տարվա ուրիշ բաժանումների ծանոթ չէին: Այս նույն ձևով է, որ մի քանի հեղինակներ *Հրույից* բառը կապում են *հուր* (կրակ) բառի հետ, իբր թե այս անունը տրված լիներ տարվա ամենատաք ամիսներից մեկին: Այս երեք անունները՝ Մարգաց, Քաղոց, Հրույից, կարող են ենթադրել տալ, որ նրանք ստեղծվեցին այն ժամանակ, երբ իրենց նշանակած ամիսները համապատասխանում էին տարվա այն փոփոխություններին, որոնց ակնարկում է իրենց նշանակությունը, բայց այն տեղը, որտեղ նրանք հայկական ամիսների շարքում իրար հանդիպում են ներկայումս, այլևս այս կարծիքին չի համընկնում, ընդունելով, որ նախնի հայերն իրենց տոմարը կարգավորում էին երկրագործության աշխատանքների բաժանման համապատասխան, և անկարելի է վերականգնել այս անունների համաձայնեցումը եղանակների կարգի հետ այն շրջանում, երբ նրանք հնարվեցին, և ձշտել այս շրջանը» (Բադայան, 1976, էջ 52):

12. **Հրոսից** – իրանական հին շրջանի փոխառություն է (պահլավերեն *fravartikan*): Առաջացել է **հուր** բառից: Այս բացատրությունն է տալիս նաև Ք. Պատկանյանը: Սա կապվում է նաև այն բանի հետ, որ այդ ժամանակ շատ շոգ է լինում: Այս բառի իրանական փոխառություն լինելը մեկնաբանվում է *fr* – **հր** նախամասնիկով գործածությամբ (Հր. Աճառյան, 2013, էջ 317):

Հրույիցը հուրի հետ է կապում նաև Վանականը՝ նշելով, որ այդ ամսին արեգակը ոտքից գլուխ այրում է:

Ըստ Աճառյանի՝ գրվել է **հրոս** և **հրորս**: Հրորսն է գալիս պահլավերեն-

նից, առաջինը կապվում է *հոսր* բառի հետ(հուր+ոս+հրոտ):

Հրոտից ամսանունը հոգնակի սեռականի ձևն է, ուրեմն հոգնակի ուղղականն է **հրոտք**, եզակին՝ **հրոտ**:

Այն ևս Հայկի որդիներից մեկի անունն է:

Ոմանք կարծում են, որ այս ամսվա անունը գալիս է այդ ամսվա տաքության պատճառով:

Հայոց ամիսները ունեն 30 օր, և հարկ էր մնացած հինգ օրը լրացնել մի հավելվածով, որը կոչվում է **Ավելյաց**:

Ավելեաց – **Աելի** բառի հոգնակի սեռականն է: Նշանակում է լրացուցիչ, ավելացրած: Գրվում է նաև **յաելեաց**: Պարունակում է 5 օր հասարակ տարիներին և 6 օր՝ նահանջ տարիներին:

Էդ.Աղայանը ամսանունների համար կազմել է հետևյալ տախտակը.

Նաւասարդ	մարտի 20-ից ապրիլի 18
Հոռի	ապրիլի 19-ից մայիսի 18
Սահմի	մայիսի 19-ից հունիսի 17
Տրէ	հունիսի 18-ից հուլիսի 17
Քաղոց	հուլիսի 18-ից օգոստոսի 16
Արաց	օգոստոսի 17-ից սեպտեմբերի 15
Մեհեկան	սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 15
Արեգ	հոկտեմբերի 16-ից նոյեմբերի 14
Ահեկան	նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 14
Մարերի	դեկտեմբերի 15-ից հունվարի 13
Մարգաց	հունվարի 14-ից փետրվարի 12
Հրոտից	փետրվարի 13-ից մարտի 14
Աելեաց	մարտի 15-ից 19

Հին հայկական ամսանունների կարգը պահպանվել է այնպես, ինչպես եղել է ամիսների անվանակոչության ժամանակ, ըստ որում այդ հաջորդականության մեջ տարվա որոշակի ժամանակների և դրանց հետ կապված երևույթների ու ամսանունների իմաստային համապատասխանությունն անժխտելի է (Աղայան, 1986, էջ 75):

Դա իսկապես անհերքելի է, քանի որ իրանական ծագումով **մեհեկան** և **ահեկան** բառերը 7-րդ և 9-րդ ամիսներն են, ինչպես դրանք եղել են նաև հին պարսկական ամիսների շարքում: **Տրէ**-ն ևս համապատասխանում է. այն 4-րդ ամիսն է, ինչպես պարսկերենում **թիր** ամիսը: Եվ քանի որ այդ համապատասխանությունը, ըստ Աղայանի, կարող էր լինել մ.թ.ա. 7-րդ դարի կեսերից ոչ ուշ, ապա հասկանալի է, որ հայկական ամսանունների անվանակոչությունը ևս պիտի այդ ժամանակ կատարված լինի: Սակայն չի բացառվում, որ այն ավելի շուտ տեղի ունեցած լինի: Սակայն անհերքելի է, որ ամսանունների՝ պարսկերենից փոխառումը կատարվել է հենց մ.թ.ա 7-րդ դարում. հայերի կազմավորման գործընթացը բուռն զարգացում է ստացել հենց մ.թ.ա 7-րդ դարից: Հավանական է նաև, որ հայկական ամսանուններն

Լալիկ Խաչատրյան, Սիրարփի Դավթյան

այլ անվանումներ ունեցած լինեն, և հենց այս ժամանակաշրջանում դրանք փոխառված լինեն պարսկերենից:

Ստորև ներկայացնում ենք երկու տոմարագետների ` հայոց տոմարի ամիսների անսամուտների մշտական զուգակցությունը Հուլյան տոմարի հետ և հայոց ամիսների պարունակած օրերը: Ինչպես կտեսնենք, այն էդ. Աղայանի կազմած տախտակի համեմատությամբ տարբերվում է ամիսների և օրերի ընդգրկմամբ:

Հովհաննես Իմաստասերի կատարած բարեփոխությունը (Բաղայան, 1976, էջ 54).

Հայոց տոմարի ամիսները	Անսամուտը հուլյան տոմարով	Հայոց տոմարի ամիսների պարունակած օրերը
Նաւասարդ	Օգոստոսի 11	30
Հոռի	Սեպտեմբերի 10	30
Սահմի	Հոկտեմբերի 10	30
Տրէ	Նոյեմբերի 9	30
Քաղոց	Դեկտեմբերի 9	30
Արաց	Հունվարի 8	30
Մեհեկան	Փետրվարի 7	30
Արեգ	Մարտի 9(8)*	30
Ահեկան	Ապրիլի 8(7)	30
Մարերի	Մայիսի 8(7)	30
Մարգաց	Հունիսի 7(6)	30
Հրոտից	Հուլիսի 7(6)	30
Ավելաց	Օգոստոսի 6(5)	5(6)

Սիմեոն Երևանցու կատարած բարեփոխությունը (Հ.Ս. Բաղայան, 1976, էջ 73).

Նաւասարդի 1	Հունվարի 6
Հոռի 2	Փետրվարի 5
Սահմի 1	Մարտի 7
Տրէի 2	Ապրիլի 6
Քաղոցի 1	Մայիսի 6
Արացի 2	Հունիսի 5
Մեհեկանի 1	Հուլիսի 5
Արեգի 1	Օգոստոսի 4
Ահեկանի 1	Սեպտեմբերի 3
Մարերի 1	Հոկտեմբերի 3
Մարգացի 1	Նոյեմբերի 2
Հրոտիցի 1	Դեկտեմբերի 2
Ավելացի 1	Հունվարի 1

Ժամանակակից ամիսների անվանումները հռոմեական են: Տարվա առաջին ամիսը եղել է *մարտը*, որը պատերազմի Աստված **Մարսի** անունն է: Ապրիլն առաջացել է **ապրիլե** (aprire – բանալ) բառից, որը նշանակում է «բողոքոջների առաջացում, բնության զարթոնք»: *Մայիսն* առաջացել է **Մայա** աստվածուհու անունից: *Հունիսն* առաջացել է գլխավոր լեզուների աստծու՝ **Յունոսի** աղավաղված անունից:

Մնացած ամիսներին տվել են լատիներեն հաշվելու հերթական համարների անունները. **quintilis** (հուլիս), **sextilis** (օգոստոս), september (լատ. septem-նշանակում է յոթ), oktober (լատ. octem- ութ), november (լատ. novem ինը), december (լատ. decem- տասը) (Լ.Խաչատրյան, 2010, էջ 147): Այս անունները, բացի **կվինտիլիս** և **սեքստիլիս** անուններից, պահպանվել են մինչև այժմ:

Հին Հռոմում 12-ի փոխարեն 10 ամիս է եղել, որը լրանալուց հետո ևս 51 օր սպասել են, ապա սկսել են Նոր տարին: *Նոսնա Պոմպեյիոսի* կարգադրությամբ ավելացնում են *հունվարը* և *փետրվարը*: *Հունվարը* տարվա առաջին ամիսն է եղել, իսկ *փետրվարը*՝ վերջինը: Նոր տարվա սկիզբը հունվարի 1-ը տեղափոխելը բացատրվում էր նրանով, որ հռոմեացիները տնտեսական ու վարչական աշխատանքների նոր տարին սկսում էին հունվարի 1-ից, իսկ ոմանք էլ կարծում են, որ այն որևէ իրադարձության հետ կապ չունի, այն դեռ բացատրված չէ:

Հունվար (januaris) անունը գալիս է **Յանոս** աստծու անունից, իսկ փետրվարը՝ (febraurius) ննջեցյալներին հիշելու **Փերրու Արիոս աստծու** անունից:

Մ.թ.ա 8-րդ թվականին Հռոմի սենատը որոշել է **Օգոստոս** կայսեր անունը հավերժացնելու համար **սեքստիլիս** ամիսն անվանել նրա անունով (Հ. Բադալյան, Երևան, էջ 86):

Հայերը 18-րդ դարից հետո ամբողջությամբ անցել են հռոմեական ամսանուններին:

Միջին հայերենում հուլիսը անվանում էին **օրախ**, որը թուրքերենից փոխառություն էր, **թէմուզ**, որն էլ փոխ էին առել արաբերենից: Սեպտեմբերը նաև անվանում էին **սեխտեմբռ**, **սեխտեմպեր**, նոյեմբերը՝ **նոյեմբռ**, **նոյեմպեր**:

Հայկական տոմարի 11-րդ ամիսն էլ երբեմն անվանում էին **մարգազ**:

Ստորև ներկայացնում ենք ամսանունների անվանումներն ըստ հայերենի տարբեր գոյավիճակների:

Գրաբար	Միջին հայերեն	Աշխարհաբար
Նաուասարդ	յադլեստոս	օգոստոս
Հոռի	գերմանիկոս,	սեպտեմբեր
Սահմի	հոկտրնբեր	հոկտեմբեր
Տրէ	նոյեմբեր	նոյեմբեր
Քաղոց	դեկտեմբերի	դեկտեմբեր
Արաց	յունուարիոս	հունվար
Մեհեկան	փերրուարիոս, փետրվար	փետրվար

Լալիկ Խաչատրյան, Սիրարփի Դավթյան

Արեգ	մարտ	մարտ
Ահեկան	ապրիլիոս	ապրիլ
Մարերի	մայիս	մայիս
Մարգաց	հունիս	հունիս
Հրոտից	յուլիոս	հուլիս
Ավելաց	-	-

Եզրակացություն

Հոդվածը նվիրված է հայկական ամսանունների ծագումնաբանության քննությանը, դրանց անվանակոչության, բառակազմության և ժամանակային ընդգրկման բացահայտմանը: Եթե հին հայկական որոշ ամսանունների ծագումը և անվանակոչությունը կապվում էր տարբեր կենդանիների և թռչունների, բնության և կենցաղային տարբեր երևույթների, ինչպես նաև թվային համակարգի հետ, ապա Հուլյան տոմարով դրանք կապում էին պատմական անձնավորությունների և Աստվածների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

Աղայան, Էդ. (1986) *Ակնարկներ հայոց տոմարների պատմության*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան:

Աղայան, Էդ. (1974) *Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան:

Ալիշան, Ղ. (2002) *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*, Երևան:

Աճառյան, Հր. (2013) *Հայոց լեզվի պատմություն*, Ա մաս, Երևան ԵՊՀ Հրատարակչություն, Երևան:

Աճառյան, Հր. (1926) *Արմատական բառարան*, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան:

Բաղալյան, Հ. (1976) *Հայոց տոմարի պատմություն*, Հայկական ՍՍՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան:

Բաղալյան, Հ. (1970) *Օրացույցի պատմություն*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան:

Դավթյան, Ս. (2017) *Նավասարդը որպես ամիս և տոն*//Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, N 2, էջեր 107-115:

Թումանյան, Բ. (1972) *Տոմարի պատմություն*, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան:

Խաչատրյան, Լ. (2010) *Հերարքրաշարժ լեզվաբանություն*, «Զանգակ-97» հրատ., Երևան:

Խաչիկյան, Լ. (1941) *Յաղագս րարենտին ի Վանական վարդապետէ ասացեալ*, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, N 1, Երևան:

Համբարձումյան Ռ., (1992), *Հայկական տոմար*, Երևան:

Հովհաննիսյան, Լ. (2006) *Գրաբարի բառապաշարը*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն հրատարակչություն, Երևան:

Մալխասյան, Ստ. (1944) *Հայերեն բացարթական բառարան*, Հայկական ՍՍՌ պետական

հրատարակչություն, Երևան:

Շիրակացի, Ան. (1940) *Տոմարագիտություն և տոմար*, Երևան:

Hübschman, H. (1897) *Armenische Grammatik*. It, Leipzig:

Lagarde, P De (1866) *Gesammelte Abhandlungen*, Leipzig:

Benvenist, E. (1965, p-6-11) *Armenien aregakn soleil et la formation nominal-akn*, REA, NS, N 2:

References

- Aghayan, Ed. (1986) *Aknarkner hayots tomarneri patmutyuan* [Notes on the History of Armenian Tomars]. Haykakan SSH GA hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Aghayan, Ed. (1974) *Barraknnakan yev stugabanakan hetazotutyunner* [Etymological and Etymological Researches]. Haykakan SSH GA hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Alishan, GH. (2002) *Hayots' hin havatky kam hetanosakan krony* [Armenian ancient faith or pagan religion]. Yerevan. (In Arm.)
- Acharryan, Hr. (2013) *Hayots lezvi patmutyun*, I mas [History of the Armenian language, Part A]. Yerevan YePH Hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Acharryan, Hr. (1926) *Armatakan bararan* [Root Dictionary]. Yerevani hamalsarani hratarakut'yun, Yerevan. (In Arm.)
- Badalyan, H. (1976) *Hayots tomari patmutyun* [History of the Armenian Tomar]. Haykakan SSH GAA hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Badalyan, H. (1970) *Oratsuytsi patmutyun* [History of the Calendar]. Haykakan SSH GA hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Davt'yan, S. (2017) *Navasard yorpes amis yev ton* [“Navasard” as a Month and Holiday]// Banber Yevasia mijazgayin hamalsarani, N 2, ejer 107-115: (In Arm.)
- Tumanyan, B. (1972) *Tomari patmutyun* [History of Tomar]. Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, Yerevan. (In Arm.)
- Khachatryan, L. (2010) *Hetakrkrasharzh lezvabanutyun* [Fascinating Linguistics]. «Zangak-97» hrat., Yerevan. (In Arm.)
- Khachikyan, L. (1941) *Yaghags tarentin i Vanakan vardapete asatseal* [The Reverend Vanakan said at the end of this year]. Matenadaran gitakan nyut'eri zhoghovatsu, N 1, Yerevan. (In Arm.)
- Hambardzumyan, R. (1992) *Haykakan tomar* [Armenian Tomar]. Yerevan. (In Arm.)
- Hovhannisyan, L. (2006) *Grabari barrapashary* [Grabar's Vocabulary]. HH GAA «Gitutyun hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Malkhasyan, St. (1944) *Hayeren batsatrankan barraran* [Armenian Explanatory Dictionary]. Haykakan SSRR petakan hratarakch'ut'yun, Yerevan. (In Arm.)
- Shirakatsi, An. (1940) *Tomaragitutyun yev tomar* [Notary science and tomar] Yerevan. (In Arm.)
- Hübschman, H. *Armenische Grammatik* [Armenian grammar]. It, Leipzig, 1985- 1897. (In Germ.)
- Lagarde, P.De *Gesammelte Abhandlungen* [Collected Papers], Leipzig, 1866. (In Germ.)
- Benvenist, E. *Armenien aregakn soleil et la formation nominal-akn* [Armenian aregakn sun and nominal-akn formation], REA, NS, N 2, 1965, p-6-11. (In Germ.)

Лалик Хачатрян

*Заведующий лабораторией лингвистических исследований Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, доктор филологических наук, профессор
Эл. адрес: linguasal51@mail.ru*

Сирарпи Давтян

*Начальник Управления по академическим вопросам
Международного университета Евразия,
соискатель кафедры армянского языка и методики его преподавания
Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна
Эл. адрес: sirarpi.davtyan@eiu.am*

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ОБЩЕАРМЯНСКИХ НАЗВАНИЙ МЕСЯЦЕВ

Целью данной статьи является рассмотрение происхождения общеармянских названий месяцев, выявление периода их именования.

Данным вопросом занимался ряд известных языковедов. Было проанализировано, что пять старых армянских названий месяцев: трэ, кагоц, арац, арег, авельяц являются исконно армянскими словами, семь – мегекан, агекан, марери, гротиц, навасард, сагми, маргац заимствованы из иранского, четыре слова являются персидскими названиями месяцев, три общеупотребительных слова под влиянием армянской культуры стали названиями месяцев: навасард, сагми, маргац, однако название месяца «гори» остается непроверенным.

Впервые было проведено сравнение названий месяцев древнеармянского, среднеармянского и современного армянского языков. В среднеармянском языке названия месяцев в основном были взяты из юлианского календаря, впоследствии перешедшие в западноармянский, часть из которых отличается написанием и произношением от западноармянских названий месяцев, а некоторые из них являются заимствованиями из арабского и турецкого языков.

В современном армянском используются латинские (римские) названия месяцев, потому что с 18 века армяне полностью перешли на юлианский календарь, полностью приняв латинские названия месяцев.

Представлено также, что составленный некоторыми астрономами армянский календарь имеет постоянное совпадение названий месяцев с юлианским календарем, но также имеются совпадения по количеству дней месяца, в результате чего стало ясно, что в разные века они были различны по своему временному обобщению.

Ключевые слова: слова хронологии, название месяца, календарь, заимствование, этимология, генеалогия, год.

Lalik Khachatryan

Head of the Linguistic Research Laboratory of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan, Doctor of Philology, Professor
E-mail: lingualal51@mail.ru

Sirarpi Davtyan

Head of the Academic Affairs Office at Eurasia International University, Ph.D. student of the Chair of the Armenian Language and Teaching Methodology at the Armenian State Pedagogical University named after K. Abovyan
E-mail: address:sirarpi.davtyan@eiu.am

QUESTIONS ON THE SUBJECT OF THE ORIGIN OF COMMON ARMENIAN MONTH NAMES

The purpose of this article is to examine the genealogy of common Armenian month names, to reveal the period of their naming, which has been examined by a number of famous grammarians.

It has been shown that five of the ancient Armenian month names are native Armenian words: **tre**, **kaghots**, **arats**, **areg**, **avelyats**, seven are borrowings from Farsi: **mehekan**, **ahekan**, **mareri**, **hrotits**, **navasard**, **sahmi**, **margats**. Four of them are Persian month names, three are cooperative words that have turned into month names in Armenian culture: **navasard**, **sahmi**, **margats**. The month name **Hori** remains unexplained.

For the first time, a comparison has been made between the month names of Old Armenian, Middle Armenian and Modern Armenian. In the Middle Armenian status, the names of the months were mainly taken from the Julian Calendar which later passed to the Modern Armenian language. Some of them differ from the Modern Armenian month names in writing and pronunciation, and others are borrowings from Arabic and Turkish. Latin (Roman) month names are used in modern Armenian, because the Armenians switched to the Julian calendar from the 18th century, borrowing all the Latin month names. The constant pairing of the dates of the months of the Armenian calendar (“Tomar”) with the Julian one compiled by some cineradiographs was also presented, as well as the days contained in the Armenian months were given, as a result of which it became clear that they were different in their temporal inclusion in different centuries.

Key words: chronology words, month name, calendar, borrowing, etymology, genealogy, year.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2022թ. մայիսի 20-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2022թ. մայիսի 25-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2022թ. հունիսի 1-ին: